ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ապրիլի 2014թ. թիվ 152-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԻ, ԶՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԻ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.24 կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2014 թվականի մարտի 28-ի թիվ 617-Ա և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի 2014 թվականի ապրիլի 1-ի թիվ 5-Ա «Նախազորակոչիկների, զորակոչիկների և զինծառայողների շրջանում կանխարգելիչ պատվաստումների իրականացման կարգը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության զինկոմիսարիատներին կցագրված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների ցանկը հաստատելու մասին» համատեղ հրամանը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Ստեղծել Լոռու մարզի նախազորակոչիկների, զորակոչիկների և զինծառայողների շրջանում կանխարգելիչ պատվաստումների միջոցառումները համակարգող մարզային և տարածաշրջանային հանձնաժողովներ և նշանակել տարածաշրջանային պատասխանատու համակարգողներ՝ համաձայն հավելված 1-ի:

2. Հանձնաժողովներին՝

Կազմակերպել, համակարգել և վերահսկել տարածաշրջաններում նախազորակոչիկների, զորակոչիկների և զինծառայողների շրջանում կանխարգելիչ պատվաստումները նախապատրաստելու և իրականացնելու գործընթացը:

3. Ստեղծել հետպատվաստումային անբարեհաջող դեպքերը /ՀԱԴ/ վերլուծող հանձնաժողով՝ համաձայն հավելված 2-ի:

4. Հանձնաժողովին՝

ա) վերահսկել պատվաստումների անվտանգ կազմակերպման գործընթացը;

բ) ապահովել պատվաստումների ընթացքում արձանագրված ՀԱԴ-երի հայտնաբերումը, գրանցումը և հաղորդումը;

գ) վերլուծել հետպատվաստումային անբարեհաջող յուրաքանչյուր դեպք և ձեռնարկել համապատասխան միջոցառումներ:

5. Լոռու մարզի զինկոմիսարիատներին կցագրված առողջապահական կազմակերպությունների ղեկավարներին՝

ա) հաստատել Լոռու մարզի նախազորակոչիկների, զորակոչիկների և զինծառայողների շրջանում կանխարգելիչ պատվաստումների գործընթացի իրականացման ժամանակացույցը:

բ) ապահովել պատվաստանյութերի պահպանման, մատակարարման և հաշվառման սառցային շղթան:

6. Լոռու մարզի բժշկական կենտրոնների տնօրեններին՝

ա) հաստատել վերակենդանացման միջոցառումներն ապահովող բրիգադների կազմերը:

բ) ապահովել բարձր պատրաստականություն՝ անհրաժեշտության դեպքում համապատասխան բժշկական օգնություն և սպասարկում ցուցաբերելու համար նախազորակոչիկների, զորակոչիկների և զինծառայողների շրջանում կանխարգելիչ պատվաստումների գործընթացի ժամանակացույցին համապատասխան:

գ) արձանագրված դեպքերի վերաբերյալ ներկայացնել տեղեկատվություն միջոցառումները համակարգող մարզային հանձնաժողովին:

7. Լոռու մարզի առողջության առաջնային պահպանման կենտրոնների տնօրեններին՝

ա) մինչ կանխարգելիչ պատվաստումների իրականացումը զինկոմիսարիատների կողմից տրամադրված անվանական ցուցակներին համապատասխան ուսումնասիրել պատվաստման ենթակա նախազորակոչային և զորակոչային տարիքի անձանց առողջական վիճակը՝ ժամանակին պատվաստում չստացած, հակացուցումներ և այլ խնդիրներ ունեցող պատանիների հայտնաբերման նպատակով:

բ) իրականացնել հսկողություն կանխարգելիչ պատվաստումներ ստացած անձանց նկատմամբ և անհրաժեշտության դեպքում ներկայացնել համապատասխան տեղեկատվություն միջոցառումները համակարգող մարզային հանձնաժողովին:

8. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ս.Լամբարյանի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2014թ. ապրիլի 23
ք.Վանաձոր